

Հաստատում եմ՝

ՀԵՀ ռեկտոր Հ. Բիշարյան

Կ Ա Ր Ծ Ի Ք



ԻԳ.00.02 - «Քաղաքական - ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Սուրեն Գազիկի Թադևոսյանի «Էթնո-կրոնական գործոնները Իրան-Ադրբեջան հարաբերությունների տարածաշրջանային զարգացման գործընթացում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Եզրակացությունը հաստատվել է ՀԵՀ Միջազգային հարաբերությունների ամբիոնի 2025թ. հոկտեմբերի 30-ի նիստում:

Նիստին մասնակցել են պ.գ.թ., դոցենտ Մյասնիկ Եսոյանը, ք.գ.թ., դոցենտ Ռոման Մելիքյանը, ք.գ.թ., դոցենտ Վարդան Մաթևոսյանը, ք.գ.թ., դոցենտ Ռաֆիկ Ավետիսյան, ք.գ.թ., դոցենտ Միեր Շահգելդյանը, ք.գ.թ., դոցենտ Նարեկ Գրիգորյանը, պ.գ.թ., դոցենտ Ռոման Կարապետյանը, պ.գ.թ., դոցենտ Գոռ Մարգարյանը:

Սուրեն Թադևոսյանի ատենախոսության թեման արդիական է, որովհետև Իրան-Ադրբեջան փոխհարաբերությունները առանձնանում են բազմաշերտությամբ և հակասականությամբ՝ նշանակալի ազդեցություն ունենալով տարածաշրջանային անվտանգության կառուցակարգերի և կայունության վրա: Երկկողմ հարաբերությունների վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտելու, թե ինչպես են պատմական ժառանգությունը, գաղափարական տարածայնությունները փոխազդում աշխարհաքաղաքական շահերի և ռազմավարական առաջնահերթությունների հետ՝ ձևավորելով պետությունների արտաքին քաղաքական դիրքորոշումներն ու վարքագծային մոդելները: Թեման ունի առանձնակի կարևորություն նաև Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության տեսանկյունից: Իրան-Ադրբեջան հարաբերությունների ընթացիկ միտումները և դրանց հնարավոր վերափոխումները կարող են նշանակալի ազդեցություն ունենալ Հայաստանի անվտանգային միջավայրի, տրանսպորտային

հաղորդողինների և արտաքին քաղաքական ռազմավարության վրա: Հետևաբար, այս փոխհարաբերությունների խորքային ուսումնասիրությունն ու դրանց զարգացման հնարավոր սցենարների վերլուծությունը կենսական նշանակություն ունեն Հայաստանի արտաքին քաղաքականության ձևավորման և ազգային անվտանգության ապահովման համար:

Ատենախոսության նպատակները՝ գիտական են: Ատենախոսը գիտական պատշաճ մակարդակով ուսումնասիրել է Իրան-Ադրբեջան հարաբերությունների զարգացման դինամիկան 1991-2025 թթ., բացահայտել երկու երկրների արտաքին քաղաքականության առանձնահատկությունները: Վերլուծվել են Սեֆյան, Ղաջարական և Փահլավյան դարաշրջանների քաղաքական ու գաղափարական ավանդույթների դերը և դրանց վերաիմաստավորումը հետհեղափոխական Իրանի արտաքին քաղաքական ինքնության, արժեքային համակարգի և հայեցակարգային մոտեցումների ձևավորման գործընթացում: Բացի այդ, հեղինակը համակողմանիորեն վեր է հանել Ադրբեջանի արտաքին քաղաքականության հայեցակարգային հիմքերի էվոլյուցիան, տարածաշրջանային դերակատարության և ռազմաքաղաքական հավակնությունների աճը, ինչպես նաև դրանց գործնական դրսևորումները՝ հատկապես 2020 թ. Արցախյան պատերազմի ընթացքում և հետպատերազմյան ժամանակաշրջանում:

Գիտական նորույթի առումով արժևորում ենք ատենախոսության այն հատվածը, որտեղ հեղինակը բացահայտել է աշխարհաքաղաքական և տարածաշրջանային գործոնների ազդեցությունն Իրան-Ադրբեջան հարաբերությունների ընթացքի վրա:

Մեր համոզմամբ, այս հետազոտությունը օգտակար է նրանով, որ այն հնարավորություն է տալիս ավելի խորությամբ հասկանալու Իրանի և Ադրբեջանի արտաքին քաղաքական մոտիվացիաները, ռազմավարական հաշվարկներն ու հնարավոր գործողությունները՝ ապահովելով տարածաշրջանային ռիսկերի ավելի հիմնավորված գնահատում և արդյունավետ հակազդման կամ հարմարվողականության ռազմավարությունների մշակման հնարավորություն: Այս ուղղությամբ ատենախոսության մեջ առկա առաջարկություններն ու եզրահանգումները ունեն գիտական բնույթ:

Հետազոտությունն ունի հարուստ գիտական և աղբյուրագիտական հենք, օգտագործվել են թեմայի ուսումնասիրության հետ կապված տեսական հիմքերն ու

հիմնական աղբյուրները: Օգտագործվել են ժամանակակից ընդհանրացնող աշխատություններ, գիտական մենագրություններ, հրապարակված փաստաթղթեր, քաղաքական գործիչների ելույթներ, օտարալեզու ակադեմիական գրականություն:

Հետազոտության գիտական նորույթը հստակորեն ձևակերպված է առանձին դրույթներով, որոնք ունեն ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն: Էմպիրիկ ուսումնասիրության արդյունքները զուգորդվել են սեփական վերլուծության հետ:

Ատենախոսության եզրահանգումները գիտական են և բավականին արժեքավոր Հայաստանի քաղաքական գիտությունների համար: Ատենախոսական աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքներով հեղինակը հանգել է այն եզրակացության, որ Իրան-Ադրբեջան հարաբերություններում արձանագրված երկարատև մրցակցությունն ու փոխադարձ անվստահությունը պայմանավորված են խորքային և կառուցվածքային գործոններով: Դրանք պետք է դիտարկել ոչ թե որպես իրավիճակային շահերի բախման կամ արտաքին դերակատարների միջամտության արդյունք, այլ որպես հետևանք այն փաստի, որ երկու պետությունների արտաքին քաղաքական ինքնությունները, ռազմավարական կողմնորոշումները և տարածաշրջանային դերակատարման պատկերացումները ձևավորվել են տարբեր պատմա-քաղաքական և գաղափարական հիմքերի վրա: Այս և մյուս եզրահանգումները կարող են օգտակար լինել ՀՀ անվտանգային միջավայրի ապահովման համար:

Ատենախոսությունը զերծ չէ նաեւ որոշակի թերություններից, որոնցից հարկ ենք համարում նշել հետևյալը.

- Դերերի տեսությունը երկկողմ հարաբերությունների վերլուծության մեջ կիրառվում է որպես մեթոդաբանական և վերլուծական գործիք՝ բացատրելու, թե ինչպես են պետություններն ընկալում սեփական և մյուս կողմի դերը, ինչպես են այդ դերերը ձևավորվում, փոխազդում և ժամանակի ընթացքում ենթարկվում փոփոխությունների: Իրան-Ադրբեջան երկկողմ հարաբերությունների բազմաշերտ փոխգործակցության համակարգային վերլուծության համար դերերի տեսության կիրառումը կարող էր լինել առավել արդյունավետ, եթե աշխատանքում հիմնավորվեր տվյալ մեթոդաբանության կիրառման «անփոխարինելիությունը» խնդրի համակողմանի ըմբռնման համար: Դիտարկումը չի վերաբերում տեսության ընտրության

նպատակահարմարությանը, այլ այն հանգամանքին, որ հարց է առաջանում, թե ինչ չափով է դերերի տեսությունը, համեմատած արդեն գոյություն ունեցող կոնստրուկտիվիստական մեկնաբանությունների հետ, իրականում խորացնում կամ վերափմաստավորում Իրան-Ադրբեջան հարաբերությունների մասին արդեն իսկ առկա գիտական պատկերացումները: Թեև ատենախոսությունը կրում է պատշաճ վերլուծական բնույթ, այնուամենայնիվ ստեղծվում է տպավորություն, որ Իրան-Ադրբեջան հարաբերությունների օրինակն օգտագործվել է հիմնականում ընդգծելու դերերի տեսության կիրառական կարևորությունը, մինչդեռ բաց է մնում այն հարցը, թե տեսության գործածումը որքանով է ապահովել արդեն լայնորեն ուսումնասիրված այս թեմայի վերաբերյալ քննադատական նոր մեկնաբանությունների ձևավորմանը և գիտական ըմբռնման խորացմանը:

- Հեղինակն աշխատանքում որոշակի անդրադարձ է կատարում Ադրբեջանում էթնիկ փոքրամասնությունների հիմնախնդրին և դրա շուրջ Իրանի Իսլամական Հանրապետության վարած քաղաքականությանը: Կարծում ենք, որ այս համատեքստում անհրաժեշտ էր ավելի մեծ ուշադրության արժանացնել թալիշներին և նրանց առնչվող հիմնախնդիրներին: Իրանի ու Ադրբեջանի միջև հարաբերություններում թալիշական գործոնը, թեպետ ներկայումս բավականին թուլացել է (Ադրբեջանը պետական մակարդակով փորձում է ջնջել թալիշների ինքնությունը), սակայն մշտապես ունեցել է որոշակի ազդեցություն: Մասնավորապես, անհրաժեշտ է հիշել, որ Ադրբեջանում պարբերաբար ազգությամբ թալիշների, հատկապես՝ ակտիվ հասարակական-քաղաքական գործունեություն իրականացնող անձանց, ձերբակալություններն ուղեկցվում են երկու երկրների միջև դիվանագիտական սկանդալով: Իրանում ևս ապրում են մեծ թվով թալիշներ, և պաշտոնական Թեհանը թալիշական հարցն իր արտաքին քաղաքականությունում ակտիվ օրակարգում է պահում:
- Իրան-Ադրբեջան հարաբերություններում Ղարաբաղյան հակամարտության դերի մասին հեղինակը խոսում է շատ հակիրճ՝ որոշակի անդրադարձ կատարելով միայն 2020 թվականի պատերազմից հետո առաջ եկած նոր իրողությունների մասին: Կարծում ենք, որ Ղարաբաղյան հիմնախնդիրն ունեցել է (թեկուզ՝ միայն կրոնական համերաշխության կոնտենտի մեկնաբանման տեսանկյունից) ավելի մեծ ազդեցություն երկու երկրների միջև հարաբերությունների վրա: Այդ կոնտեքստը բացահայտելու համար անհրաժեշտ էր ուսումնասիրել նաև Արցախյան առաջին պատերազմի

ընթացքում Իրանի վարած քաղաքականությանը, ինչպես ռեգիոնալ, այնպես էլ՝ Իսլամական համագործակցության կազմակերպության շրջանակներում:

- Դիտարկելով էթնո-կրոնական գործոնների իրանա-ադրբեջանական հարաբերությունների տարածաշրջանային զարգացման գործընթացի ընդհանուր համատեքստում (Գլուխ 3, Ենթագլուխ 3.1) տարածաշրջանային էներգետիկ ինտեգրացիոն գործընթացների և տնտեսական կարողությունների աճի ազդեցությունը և արտաքին քաղաքական հայեցակարգային նոր մոտեցումների ձևավորման խնդիրները՝ ատենախոսը, այնուհանդերձ, չի անրադարձել նշված հարցադրումների պատմաինստիտուցիոնալ մի շարք կարևոր խնդիրների համակարգային վերլուծությանը, այդ թվում՝ տարածաշրջանում ոչ պակաս կարևոր որոշ նախագծերի և տարածաշրջանային էներգետիկ դերակատարների ներգրավվման առումով, որոնց հաշվի առնելով և որոնց հետ փոխգործակցության և մասնակցության ուղղությամբ՝ ձևավորվել են տարածաշրջանային կարևոր իրադարձություններ, ազդեցության գործոններ և աշխարհաքաղաքական վեկտորային փոփոխությունների որոշակի տրամաբանություն: Դրանց թվին կարելի է դասել Նաբucco (Nabucco) չիրականացված, սակայն հետագայում ընդհանուր աշխարհաքաղաքական զարգացումների վրա մեծ ազդեցություն թողած էներգետիկ նախագիծը, որտեղ մեծ դերակատարում ուներ նաև Իրանը: Մյուս կարևոր գործոնը՝ ԳՈՒԱՄ (GUAM) տնտեսական կազմակերպությունն է, որը, լինելով, այդ թվում՝ տնտեսական և առավելապես էներգետիկ նախագիծ, միտված է ուսական տնտեսական, այդ թվում՝ էներգետիկ հեգեմոնիայի դեմ և դրանց պաշարների նվազեցմանը Եվրոպայում, որտեղ Ադրբեջանն առանցքային դերակատարում ունի: Վերոնշյալ նախագծերի ուսումնասիրությունն ու վերլուծությունն ատենախոսության սույն բաժնում հատկապես կարևորվում է՝ հաշվի առնելով ատենախոսի կողմից ատենախոսության մեջ մատնանշված որպես գիտահետազոտական վերլուծության պատմական շրջանակների լայն սպեկտրի հաստատման պայմանում::
- Բազմաբովանդակ և համապարփակ վերլուծության արդյունքում ատենախոսությունն առավելապես կշահեր, եթե իրանա-ադրբեջանական հարաբերությունների էթնո-կրոնական գործոնների վերլուծության տիրույթում առաջ քաշվեին նաև բազմամշակութաբանական (multiculturalism) և սիներգիստական (Synergism) մոտեցումների ու հակամարտությունների բազմավեկտոր ուսումնասիրությունները: Այն հնարավորություն կտար

առավել պատկերալից, ամբողջական և բովանդակալից դարձնել դիտարկվող հիմնահարցերը, այդ թվում՝ կայծակնային արագությամբ ընթացող աշխարաքաղաքական բուռն զարգացումների և փոփոխությունների համատեքստում:

Սակայն այս թերությունները չեն գցում ատենախոսության գիտական արժեքը: Ատենախոսության բոլոր հատվածում առկա են թարմ և արժանահավատ գնահատականներ և համեմատություններ: Հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները, որոնք ունեն ինչպես գիտական, այնպես էլ գործնական նշանակություն: Նա ՀՀ - ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին համապատասխան կարողացել է բարձրացնել գիտական խնդիր: Ելնելով վերոհիշյալ հանգամանքներից՝ ՀԵՀ Միջազգային հարաբերությունների ամբիոնը, որպես առաջատար կազմակերպություն, գտնում է, որ ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Սուրեն Գազիկի Թադևոսյանի «Էթնո-կրոնական գործոնները Իրան-Ադրբեջան հարաբերությունների տարածաշրջանային զարգացման գործընթացում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին:

ՀԵՀ Միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ  Մ. Եսոյան

Պ.գ.թ., դոցենտ Մ. Եսոյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀԵՀ գիտական քարտուղար

ա.գ.թ., դոցենտ

Գ. Մանասյան



07.11.2025թ.